

Վարդան Գ. Դևրիկյան
բանաս. գիտ. դոկտոր

ԱՐԱՐԱՏՆ ՈՒ ԱՆԻՆ՝ ԱՐՈՎՅԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐՈՒՄ

*Նա գնում էր կրկին դեպի հեռուն այն լուրք,
Դեպի լյառը անհաս ու վեհանիսր...*

Եղիշե Չարենց

200 տարի առաջ՝ 1809 թվականին ծնված Խաչատուր Արովանը՝ իբրև հայ նոր գրականության հիմնադիր, ազգային գործիչ և ինքնատիպ մտածող, իրենով խորհրդանշում էր Հնի և Նորի սահմանագծի, ջրբաժանի ամբողջական աշխարհայացքային ընկալումը, որի դերը Հայոց պատմության հողվույթում խաղաց Արևելյան Հայաստանի անցումը պարսկական տիրապետությունից ռուսական իշխանության:

Ըստ այդմ՝ տեղի էր ունենում և՛ կացութաձևի և՛ վարչակարգի արմատական շրջադարձ, որի արդյունքում գրողի հին հույսերն ավարտվելու էին նոր հիասթափությամբ՝ Մ. Էջմիածնի ավանդաշունչ միջավայրում և Գորպատյան նոր գաղափարների հորձանուտում: Հակադրությունների այս շղթան առաջ էր բերում հոգեկան մի հեղաբեկում, ներքին մի պայքար, որը պայմանավորելու էր նաև Խաչատուր Արովանի ստեղծագործությունների խոր հուզականությունը՝ հեղինակային ես-ի և աշխարհայացքային ընկալումների մասնատվածությունը, ինչն ի վերջո պայմանավորեց նրա կյանքի ողբերգական ավարտը, երբ փակվեցին և՛ անցյալի և՛ ներկայի դռները, իսկ ապագայի ելքը մատնանշող դուռը այդպես էլ չբացվեց:

Հնի և նորի սահմանագծին Արովյանը ձգտում էր նոր խորհուրդ ու բովանդակություն հաղորդել անցյալի ավանդական, նվիրական արժեքները մարմնավորող հասկացություններին, որպեսզի նրանք, պաշտամունքի առարկա լինելուց բացի, կենդանիորեն մասնակցեին դեպի նոր շրջանի պատմություն ազգի առաջադիմության շարունակական ընթացքին: Եվ ահա այս բախտորոշ ճանապարհին Արովյանը խախտեց անցնող դարերի ընթացքում ձևավորված երկու ավանդույթ. մեկը՝ իր հասարակական գործունեության սկզբում, իսկ երկրորդը՝ «Վերք Հայաստանի» վեպի մեջ:

Առաջինը Խաչատուր Արովյանի Արարատի գագաթ բարձրանալու փաստն էր, երկրորդը՝ «Վերքում» տեղ գտած՝ Աղասիի խմբի Անիում գիշերելու պատմությունը:

Փորձենք ներկայացնել այդ երկու կարևոր արգելքները, և թե ինչպես Աբովյանը հաղթահարեց դրանք՝ հաջորդ սերունդների համար հոգևոր-մշակութային մի ինքնատիպ ճանապարհ գցելով՝ **Արարատից դեպ Անի**: Դա անհրաժեշտ է, որպեսզի խորությամբ հասկանանք, թե ինչն¹ նրա խորհրդավոր անհայտացումից հետո ժողովուրդը, մի կողմ թողնելով մեծ գրողի վախճանի մասին առկա կենցաղային և քաղաքական վարկածները, մեր պատմության նոր շրջանի **նոր Լուսավորչին Անիից Արարատ ձգվող ճանապարհով տարավ դեպի լյառն Մասիս**:

Աբովյանի համար շրջադարձային եղավ 1829թ. սեպտեմբերի 8-ը, երբ Ս. Էջմիածին եկավ Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտը (1791-1841թթ): 1811թ. նա բարձրացել էր Կազբեկը և այժմ էլ ցանկանում էր բարձրանալ Արարատը: Պարրոտի գլխավորած խմբին Մայր Աթոռում կաթողիկոսի հանձնարարությամբ ուղեկցում է Աբովյանը: Իմանալով, որ հյուրերը մտադիր են Արարատի գագաթը բարձրանալ, Աբովյանը թախանձագին խնդրում է, որ իրեն ևս վերցնեն: Պրոֆեսորը նրան չի մերժում և տանում է իր արշավախմբի հետ: Երրորդ փորձից հետո՝ 1829թ. սեպտեմբերի 27-ին, Պարրոտի գլխավորած արշավախմբի անդամները, այդ թվում և Աբովյանը, բարձրանում են Արարատի գագաթը: Պարրոտը մեծ դրվատանքով է գրում Աբովյանի մասին. «Թեև հազիվ 20 տարեկան և վանական հանգիստ կյանքին վարժված՝ ոչ մի վայրկյան չէր խուսափում այն ճիգերից, որ պահանջում էր գործը, և ամբողջ ժամանակ ցուցաբերում էր խիզախություն, տոկունություն, ինչպես և բարձր ոգևորություն»¹:

Պարրոտը կենդանի գույներով է նկարագրում այն ոգևորությունը, որ պատել էր Աբովյանին՝ Արարատի գագաթին հասնելուց հետո. «Մեկ էլ տեսնեմ՝ Աբովյանն իմ ուղեկիցների մեջ չէ: «Նա խաչ է տնկում» ասացին: Ես էի մտածում դրան ձեռնարկել, այն էլ կլոր վայրի մեջտեղը, վայելուչ կետում, որտեղ խաչն ամենից ավելի ապահով կլիներ: Սակայն Աբովյանը սրբազան եռանդով գործի էր կպել և խաչի համար գագաթի հյուսիս-արևելյան ծայրին էր մի կետ ընտրել, որովհետև ինչպես նա ճիշտ նկատեց, եթե խաչը մեջտեղում տնկված լիներ, [Արաքսի] հովտից բնավ տեսանելի չէր լինի, քանի որ խաչն ընդամենը մոտ հինգ ոտնաչափ բարձրություն ուներ: Որպեսզի խաչը տեսանելի լիներ ոչ միայն հովտից, այլև Ակոռիից և Մուրբ Հակոբից, Աբովյանը, կյանքը վտանգելով, սեպ գառիվայրի ծայրով այնքան էր առաջ գնացել, որ հարթության կենտրոնից մոտ 30 քայլ ներքև էր գտնվում, այդ պատճառով էլ ես նրան չէի նկատում: Ես նրան այդտեղ տեսա աշխատելիս: Նա առցի մեջ փոս էր փորում խաչն ամրացնելու համար»²:

Այս վերելքը ցնցեց բոլորին ո՛չ միայն Արարատի գագաթը բարձրանալու բնական դժվարության և անգամ՝ անհնարին թվալու պատճառով, այլև այն բանի համար, որ լինելով տապանակիր լեռ, այն անմատչելի էր համարվում մահկանացուների համար:

Նման ըմբռնման առաջին արտահայտությունը մեր մատենագրության մեջ գրտնում ենք դեռևս հինգերորդ դարում, Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Մծբնա Մուրբ Հակոբ Հայրապետի կողմից Նոյյան տապանի մասունքը ձեռք բերելու պատմությունում: Բուզանդը գրում է, որ բարձրանալով Արարատի գառիվեր լանջով. «Արդ՝ երբ նա սաստիկ հոգևած էր, վերը՝ կատարի մոտ, դժվար

1 Ժամանակակիցները Աբովյանի մասին, կազմեց Դ. Մուրադյանը, Եր., 1941, էջ 15:

2 Նույն տեղում, էջ 14:

տեղերում, ուժասպառ եղավ և քունը տարավ: Եվ Աստուծու հրեշտակը եկավ ու նրան ասաց. «Հակոբ՛ք, Հակոբ՛ք»: Եվ նա ասաց. «Այստեղ եմ» (լսում եմ): Եվ հրեշտակն ասաց. «Տերը քո աղաչանքներն ընդունեց և խնդիրդ կատարեց. այդ, ինչ որ գրվիսիդ տակը դրված է՝ տապանակի փայտերից է. ինքս բերի քեզ համար. այնտեղից է: Էլ չաշխատես (տապանը) տեսնել, Տերը այսպես կամեցավ»³:

Բուզանդի մոտ այսպիսով թեն ուղղակիորեն չի ասվում, սակայն տապանի մասունքը բերած հրեշտակի այն խոսքերից, թե «Էլ չաշխատես տապանը տեսնել, Տերը այսպես կամեցավ», երևում է, որ թույլատրելի չի համարվել Արարատի գագաթը բարձրանալը:

Հաջորդող դարերում արդեն ընդհանրացված ըմբռնում է դարձել Արարատի գագաթը բարձրանալու՝ անթույլատրելի լինելը, որի համար վկայակոչվել է Հակոբ Հայրապետի հենց այս պատմությունը, և Ս. Հակոբի ննջելու տեղը համարվել է աստվածադիր այն կետը Արարատի լանջին, որից վեր չպետք է բարձրանար մահկանացու մարդը, որը իր խոսացած ընդհանրացումն է գտել Գրիգոր Տաթևացու հետևյալ ձևակերպման մեջ. «Ոչ ոք կարէ ելանել և տեսանել Արարատ»⁴ (Ոչ ոք չի կարող ելնել և տեսնել Արարատը):

Այս պատմությանը և նրա վրա հիմնված հիշյալ ըմբռնմանը ծանոթ են եղել նաև եվրոպական ուղեգրողները, որոնք հոգևոր տարբեր վերաիմաստավորումներով և վերամեկնաբանություններով վկայակոչել են Նոյյան տապանի մասունքի այս պատմությունը:

Այսպես, Մարկո Պոլոն, ով իր նշանավոր ուղեգրությունը դեպ Արևելք՝ մինչև Չինաստան, սկսել էր 1271թ. Կիլիկյան Հայաստանի Այաս նավահանգստից, Արարատի մասին գրում է. «Եվ դուք պետք է գիտենաք, որ թե այս Հայաստան երկրում է, որ կա Նոյյան տապանը մի մեծ լեռան կատարին, որի գագաթին այնքան մշտատև ձյուն կա, որ ոչ ոք չի կարող բարձրանալ, որովհետև ձյունը երբեք չի հալչում և շարունակ ավելանում է նոր տեղումներից»⁵:

Սեկ այլ իտալացի ուղեգրող՝ Ամբրոսիո Կոնտարինին, 1473-1477թթ. իր ուղևորության ընթացքում անցնում է Այսրկովկասով և Հայաստանով: Արարատի մասին նա գրում է. «Մենք հասանք Նոյի լեռը, որ շատ բարձր է ու ծածկված է ձյունով, գագաթից մինչև ստորոտը, ամբողջ տարվա ընթացքում: Ասում են, թե շատ մարդիկ են փորձել բարձրանալ գագաթը: Ոմանք երբեք չեն վերադարձել, և ովքեր որ վերադարձել են, ասում են, թե որ երբեք դեպի վեր մի ճանապարհ չպիտի գտնվի»⁶:

Արարատի անմատչելիությունը եթե հիշյալ երկու վկայություններում ավելի շատ բացատրվում է լեռան բարձրաբերձ և ձյունապատ լինելով, ապա Ուիլյամ Ռուբրուքը, որը 1252թ. Պոլսից Հայաստանով գնացել է Մոնղոլիա, արդեն հոգևոր խորհուրդ է հաղորդում Արարատի գագաթը բարձրանալու անհնարիությունը: Գրելով՝ «Շատերը փորձել են բարձրանալ այս լեռը, բայց ոչ ոք հաջողած չէ», նա վկայակոչում է Ս. Հակոբի պատմությունը, որը լսել էր մի հայ հոգևորականից: Այնուհետև միասին մի խորհուրդ հաղորդելով Արարատի գագաթի անմատչելի լինելուն՝ գրում է. «Այս լեռը ինձ այնքան բարձր չէր թվում, որ մարդիկ չկարողանա-

3 Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, աշխտ. Ստ. Մալխասյանի, Եր., 1987, էջ 39:

4 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կ. Պոլիս, 1729, էջ 294:

5 Յոս. Գալոբյան, Ուղեգրություններ, Կ. Ա. ԺԳ-ԺԶ դար, Եր., 1932, էջ 48:

6 Նույն տեղում, էջ 227:

յին բարձրանալ: Մի ծերունի մի շատ բնական պատճառաբանություն տվեց, թե ինչու պետք չէ փորձել բարձրանալ այս լեռը: Նրանք անվանում են լեռը Մասիս, և որ իրենց լեզվի մեջ իզական սեռի է պատկանում: «Ոչ որ, -մա ասաց,-պետք չէ բարձրանա Մասիսը, նա աշխարհի մայրն է»⁷:

Միտիկական այս ըմբռնումը հաջորդող դարերի ընթացքում առավել է խորանում՝ իր արտացոլումը գտնելով նաև 19-րդ դարի եվրոպական ուղեգրողների գործերում: Այսպես, Նապոլեոն Բոնապարտի ներկայացուցիչ գեներալ Գարդանը, 1807թ. Հայաստանով Պարսկաստան գնալիս անցնելով Արարատյան դաշտով, գրում է. «Կանգնած ենք Արարատ լեռան դիմաց, ուր հանգչել է Նոյի տապանը. հավիտենական ձյունով ծածկված է գագաթը, ուր իշխում են ամպերը, և որ ըստ հին ավանդության՝ անմատչելի է: Դուռնըփորը վստահեցնում է, թե ոչ մի ճանապարհորդ չի կարողացել բարձրանալ այնտեղ: Թուրքերը և պարսիկները ավելի հեռու են գնում. ասում են, թե միայն որոշ բարձրության կարելի է հասնել և թե ճանապարհորդները լեռան երեք քառորդ բարձրության վրա հասնելուց և քնելուց հետո, զարթնել են սարի ստորոտում»⁸:

Այստեղ Գարդանը բերում է Ս. Հակոբի պատմության՝ միջնադարում խըմբագրված այն տարբերակը, որում ասվում է, թե Մծբնա Հայրապետը որքան բարձրանում էր Արարատի գագաթն ի վեր, ամեն անգամ քնելուց հետո հայտնվում էր լանջի նույն մի կետում, որը խորհրդանշում էր, որ այդ վայրն է մահկանացուի համար նախասահմանված վերջին կետը Արարատի գագաթի ճանապարհին:

Նույն այս ժամանակ՝ 1808-1809թթ. անգլիացի դիվանագետ Ջեյմս Մորիերը, ով ևս անցել է Արարատյան դաշտով, գրում է, որ այստեղ պարսիկները իրեն ասել են, թե «ով որ փորձել է բարձրանալ Արարատը, երբեք չի վերադարձել, և թե Էրզրումի փաշան հարյուր մարդ էր ուղարկել փորձելու համար, և բոլորն էլ մեռել էին»⁹:

Այսպիսով, դարերի ընթացքում ձևավորված մնան հաստատուն ըմբռնումներն էին իշխում, երբ Պարրոտը բարձրացավ Արարատի գագաթը՝ իրեն ուղեկից ունենալով երիտասարդ սարկավազ Խաչատուր Աբովյանին:

Պարրոտը պատմության մեջ հայտնի առաջին անձնավորությունն է, որին հաջողվել է բարձրանալ Արարատի ձյունապատ գագաթը: Ներկայացնելով Արարատի գագաթը բարձրանալու անհնարիությունը՝ նա գրում է. «Նոյի ժամանակներից աստվածային վճիռով մահկանացուներին արգելված էր Արարատի գագաթը բարձրանալ: Հայերի մեջ կա համոզմունք, որ Նոյի տապանը մինչև այսօր էլ մնում է Արարատի գագաթին և ոչ մի մարդկային էակի չի թույլատրվում մոտենալ նրան: Այս ավանդությունը հայ պատմագիրները կապում են Հակոբ վանականի հետ, որը Նիսիբիսի պատրիարքն էր [Մծբնի հայրապետը] և հավանաբար Սուրբ Գրիգորի ժամանակակիցն ու ազգականը: Այս վանականը Նոյի պատմության շուրջը վեճերին վերջ տալու համար որոշեց բարձրանալ Արարատի գագաթը և համոզվել տապանի առկայությանը: Լեռան լանջին նա մի քանի անգամ քուն մտավ և արթնանալիս միշտ տեսնում էր, որ քնած ժամանակ անգիտակցորեն իջել էր այնքան, որքան բարձրացել էր: Վերջապես Աստված խղճաց Հակոբին և երազում հրեշ-

7 Նույն տեղում, էջ 18:

8 Յովհ. Յակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, Եր., 1933, էջ 100:

9 Նույն տեղում, էջ 267:

տակ ուղարկեց՝ հայտնելու, որ իր բոլոր ջանքերը զուր են, որովհետև գազաթը անհասանելի է: Հակոբին մխիթարելու և մարդկության հետաքրքրությունը բավարարելու համար Աստված նրան ուղարկեց տապանի մի կտոր: Այս նույն կտորն է պահպանվում Էջմիածնի Մայր Տաճարում՝ որպես հատուկ սրբություն»¹⁰: Ինչպես տեսնում ենք, Ս. Հակոբի պատմությունը Պարրոտի մոտ ևս ներկայացվում է իմաստային կարևոր նրբերանգներ պարունակող մի քանի հավելումներով:

Պարրոտը տակավին նոր էր իջել Արարատից, երբ սրբազան լեռան գազաթի անմատչելիության ըմբռնման, ինչպես նաև մարդկային նախանձի պատճառով ոչ միայն հայկական, այլև ռուսական ու եվրոպական տարբեր շրջանակներում սկսեցին լուրեր տարածել, թե Պարրոտը Արարատի գազաթին չի հասել:

Այս գրպարտությունները հերքելու համար Պարրոտը դիմում է ռուսական իշխանություններին, որպեսզի նրանք երդվեցնելով հարցաքննեն վերելքի մյուս մասնակիցներին: Այս առիթով գերմաներենով գրված իր ծավալուն հավաստող խոսքի մեջ Աբովյանը անդրադառնում է նաև Արարատի գազաթը հասնելու անհնարինությանը: Վկայակոչելով Ս. Հակոբի պատմությունը՝ նա գրում է. «Աստծուց առաքված հրեշտակը որոշակիորեն նրան հայտնել է, որ Տերն արգելել է որևէ մահկանացուի ոտք դնել այդ սուրբ վայրը, այլպես նա կենթարկվի Նրա աստվածային սուրբ գայրության»¹¹:

Շարունակելով խոսքը՝ Աբովյանը գրում է, որ իր հայրենակիցները «պետք է և պարտավոր են հպարտ լինել նրանով, որի նմանը [Արարատ] ոչ մի երկիր չունի, և նրանք պետք է հանգիստ լինեն, որ մենք մեր ոտքերով բնավ չենք շոշափել այն հողը, որի վրա կանգնած էր տապանը, այլ միայն այն 100 ոտնաչափ ձյան շերտը, որը ծածկում էր այդ սրբազան հողը»¹²:

Այստեղ Աբովյանը ակնարկում է առկա այն ըմբռնումը, որ տապանի կանգ առած տեղը սուրբ է, և որ մարդկային ոտնահետքերի այդ տեղին դիպչելը պատշաճ չէ, սակայն իրենում տապանը կրող ձյան շերտի վրա կանգնելը թույլատրելի է:

Աբովյանը հավաստում է, որ իրենց երրորդ փորձը հաջողությամբ է պսակվել, և որ իրենք բարձրացել են Արարատի գազաթը և «ես իմ ձեռքով մի փայտե խաչ եմ տնկել գազաթի եզրին՝ հյուսիսային կողմից և այն ամրացրել սառած ձյան մեջ»¹³:

Տապանի հանգչած տեղի առանձնահատուկ լինելու այս ըմբռնումը ներկայացրել է նաև ռուս հայտնի գեներալ Ալեքսեյ Երմոլովի դեսպանագնացության կազմում Հայաստանով 1817թ. անցած Մորից ֆոն Կոցեբուն, գրելով. «Ասում են, թե Արարատի կատարին կա մի կետ, որ երբեք ձյունով չի ծածկվել, մի կարգ բարեպաշտ քրիստոնյաներ կարծում են, թե դա Նոյի տապանն է, ուրիշները, նվազ կրոնասեր, հավատում են, թե այդ այն տեղն է, ուր տապանը հանգչեց»¹⁴:

Արարատի գազաթը բարձրանալը Աբովյանին, սակայն, ոչ թե մեղավորության զգացում ներշնչեց, այլ սրբազան մի ոգևորություն: Նրա առջև բացվեց Հայոց աշխարհը իր ողջ հմայքով և գեղեցկությամբ: Ինչպես ինքն է գրում. «Երևանը, Արաքսը, Բայազետը, Եփրատը, Սևանա լիճը, Փոքր Մասիսը, Արագածը և բոլոր

10 Ֆրիդրիխ Պարրոտ, Դորպատից Արարատ, Եր., 1990, էջ 61:

11 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, Եր., 1956, էջ 32:

12 Նույն տեղում:

13 Նույն տեղում:

14 Գ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. 2, էջ 525:

մյուս ձյունածածկ լերկ լեռներն իրենց մառախլապատ հովիտներով... այդ սքանչելի կտավի կախարդական պատկերներն էին»¹⁵:

Արարատի գագաթը ելնելու անկրկնելի այս տպավորությունները ավելի քան մեկ տասնամյակ անց իրենց արտացոլումն են գտել և «Վերք Հայաստանի» վեպում: Արարատն իր ողջ վիթխարիությամբ ու սպիտակափառ հմայքով տեսած Աբովյանը «Վերքի» նշանավոր առաջաբանում գրում է. «Մասիս առաջիս էր կանգնած միշտ, որ մատով ցույց էր տալիս, թե ի՞նչ աշխարհի ծնունդ են ես»¹⁶: Եվ ինչպես որ Աբովյանն էր Արարատի գագաթից նայել Հայոց աշխարհին, այնպես էլ Աղասին է նայում Արարատին, Հայոց Բիբլիական լեռանը ուղղելով ողբախառն հետևյալ տողերը.

**Ամպերն առաջիս, սարերն ետևիս,
Քեզ մտիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,
Աղի արտասունքով երված, խորոված՝
Երեսիդ նայիմ, մնամ քարացած**¹⁷:

Թե՛ կյանքում և թե՛ «Վերքում» Աբովյանին ճանապարհը Մասիսից տանելու էր դեպի Անի: Մասիսը աչքի առջև՝ Հայոց աշխարհում հալածական դեգերող Աղասին որպես անցյալի փառքի խորհրդանիշ և ապագայի քաղաքական իդեերի հանգրվան հայտնաբերում է **Անին**, որը, համաձայն միջնադարյան ընդհանրացած ըմբռնման, կործանվել էր անեծքից:

Ավանդությամբ ասվում է, որ անեցիները թեև կառուցել էին հազար և մեկ եկեղեցի, սակայն հետո իրենց ունեցած հարստությամբ այնքան են մեծամտանում, իրենց բարձր դասում, որ եկեղեցական արարողությունների ժամանակ բարձրահասակ հոգևորականների առջև ցածր գրակալ էին դնում, որպեսզի Ավետարանն ընթերցելիս ներքև խոնարհվեին, իսկ կարճահասակ հոգևորականների առջև բարձր գրակալ էին դնում, որ ոտքերի մատների ծայրերի վրա կանգնեին և վեր ձգվեին: Նրանց սաստելու համար, ըստ նույն ավանդության, Անի է գալիս Հովհաննես Երզնկացի նշանավոր վարդապետ-մատենագիրը, որին ևս սակայն, սաստիկ ծաղրի և անարգանքի են ենթարկում, որից զայրացած, նա բարձրանում է քաղաքի դիմաց գտնվող մի բլուր և անիծում քաղաքը, որից հետո Անին ավերվում է¹⁸:

Պատահական չէ, որ Անիի կործանումը կապվում է հենց Հովհաննես Երզնկացու անվան հետ: Բագրատունյաց երբեմնի մայրաքաղաքը կործանվել է 1319թ., իսկ Երզնկացին վախճանվել է 1293թ., և այս առումով քաղաքի կործանմանը ամենամոտ գտնվող ամենանշանավոր վարդապետն է, ուստի ժամանակային որոշակի տեղաշարժով ժողովուրդը նրան է վերագրել Անիի կործանման անեծքը:

Անիի մասին Աբովյանը «Վերքում» գրում է երկիցս: Առաջին անգամ ավելի հպանցիկ՝ ասես ներկայացնում է հինավուրց քաղաքը, ուր հետո Աղասին պետք է փորձեր իրականացնել իր ազգային-քաղաքական ծրագիրը: Առաջին համառոտ այս անդրադարձում, սակայն, Աբովյանն արդեն խտացված ներկայացնում է

15 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ. 7, էջ 30:

16 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, աշխատ. Պ. Հակոբյան, Եր., 1981, էջ 42:

17 Նույն տեղում, էջ 236:

18 Աբրահամ կաթողիկոսի Կրետացույ Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 104-108:

Անին որպես անիծված մի քաղաք, իր ցավը հայտնելով ձևավորված մման ըմբռնման դեմ:

Ինչպես Աբովյանն է գրում, «Ադասու ընկերքը Անի քաղաքի բուրջը մտան ու էնտեղ, ուր հարյուրավոր եկեղեցի, հազարավոր տներ, քոչք ու սարեք դիմացի սարերին ամաչացնում, վախացնում էին, ուր, ըստ ասության ռամկին, այնքան էր հարստություն և ճոխություն, մինչ մեկ հովիվ տեսնելով մեկ Չատկի, թե կնիկը եկեղեցումը տեղ չէր ճարել, էս պատճառով մեկ ահագին տաճար շինեց, ու մեկ անսիրտ վանքականի խաթեր Աստված Հայոց վերջին կենաց ճրագը փչեց, թագավորաց թախտը կործանեց, իրանց սրո, հրո գերի արավ: Ա՛խ, անմեղ սնապաշտություն, թագավորաց հաբեղայից մատաղ տվինք, որ էստեղ ընկանք, է՛: Ու էն հիանալի ավերակքը, եկեղեցիքը թողեց մեզ սզո և լացի տեղեր»¹⁹:

Ինչպես տեսնում ենք, Աբովյանը այստեղ գեղարվեստորեն և խոր հուզականությամբ այն ըմբռնումն է ներկայացնում, որ Անին եղել է հազար ու մեկ եկեղեցիների հարուստ քաղաք, ուր անգամ հովիվը իր տոհմական եկեղեցին է կառուցել քաղաքի պարիսպներից դուրս, որ իր կինը քաղաք գնալով՝ տեղ չլինելու պատճառով հանկարծ եկեղեցուց դուրս չմնա:

Սակայն, Աբովյանը, նկատի ունենալով Հովհ. Երզնկացուն վերագրվող անեծքը, նրան անվանում է անսիրտ վանական, այսինքն՝ չի ընդունում ընդհանրացած այն ըմբռնումը, որ Անին անեցիների մեղքերի պատճառով կործանվեց: Միաժամանակ, հայ պատմագիրներին համահունչ, Անին նա համարում է հայոց պետականության խորհրդանիշը, որի անկումը պայմանավորեց հայոց թագավորության վերացումը, և թե Անիի ավերմամբ հայոց թագավորների գահը կործանվեց: Աբովյանի այս տողերը ասես արձագանքը լինեն Մատթեոս Ուռհայեցու հետևյալ խոսքերի. «Անի քաղաքի ամբողջ բնակչությունը հավաքվեց հայոց առաջին թագավորների գերեզմանոցում և այնտեղ ողբաց հայ ժողովրդի անտերունչ դառնալը: Բոլորն աղիողորմ ողբում էին և իրենց թագավորության գահը, իրենց թագավոր Գագիկին... Խարխվեց ու փուլ եկավ Բագրատունյաց տոհմի տերությունը»²⁰:

Անիի՝ մեր ժողովրդի կյանքում ունեցած դերը և նշանակությունը լավագույնս արտահայտվել է Առաքել Դավրիժեցու հետևյալ տողում. «Թաթարները գրավեցին Անին և ողջ [Հայոց] աշխարհը»²¹:

Այստեղ Աբովյանը նաև առաջիններից մեկը մեր նոր շրջանի գրականության մեջ, միջնադարյան ըմբռնումներին հակասող այն միտքն է հայտնում, որ երբ հայոց թագավորները և ընդհանրապես՝ զորականները սկսեցին հետևել հոգևորականների կրոնասիրությանը և ճգնակեցությանը, Հայաստանը կորցրեց իր պետականությունը, որի արդյունքում աշխարհական կառույցներն ու եկեղեցական սրբավայրերը մնացին որպես սզո և լացի տեղեր: Աբովյանը այնուհետև գրում է որ Ադասու ընկերները Անիի շրջակայքում մի քանի ավազակների են սպանում: Այս դրվագը ևս միայն գեղարվեստական երևակայության արդյունք չէ: Աբովյանին գրեթե ժամանակակից Սինաս Բժշկյանը «Ճանապարհորդություն ի Լեհաստան» ուղեգրական գործում գրում է. «Այն ազնի շինուածք եղեն բնակարան գազանաց և պատսպարան աւազակաց»²²:

19 Նույն տեղում, էջ 190:

20 Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, աշխատ. 3. Բարթիկյանի, Եր., 1991, էջ 107:

21 Առաքել Դավրիժեցի, Պատմություն, աշխատ. 4. Առաքելյանի, Եր., 1983, էջ 487:

22 Մ. Բժշկեան, Ճանապարհորդություն ի Լեհաստան, 1830, Վենետիկ, էջ 83:

Թե որքան ընդհանրացած է եղել միջնադարյան անեծքի պատմությունից բխող համընդհանուր սարսափը, երևում է նաև Աբովյանի հետևյալ տողերից. «Հենց էսօր էլ թուրք, քուրդ, հայ՝ ոչ որ սիրտ չի անում Անու միջովն անց կենա, որովհետև կարծում են, թե մեջը քաջքերով լիքն ա»²³: Նույն այս սնահավատության պատճառով է, որ Հուսեին խանի գորքին Անիի շրջակայքում արածող մորուքավոր այծերը թվում են որպես սատանաների և չար ոգիների մի բազմություն, երբ նրանք խուճապահար փախչում են Ադասու ընկերների՝ քաղաքի պարիսպներից արձակված հրագենային համազարկերից:

Իսկ ահա Անիի վերաշինությունը որպես քաղաքական ծրագիր Աբովյանը այնուհետև ներկայացնում է «Վերքի» երրորդ գրքի ութերորդ և իններորդ բաժիններում: Սկզբում խորին գեղարվեստականությամբ նախ պատկերում է ամայացած քաղաքը. «Մեկ տափարակ, դուզ տեղ բաց ա ըլլում հանկարծ տեսնողի առաջին մեկ մեծ դաշտ՝ չորս կողմը սարերով պատած, աջ ու ձախ սևին տալիս, ու քանի գնում ա մարդ, ամպ ու դուման քաշվում, պարզում են, ու հենց իմանում ես, թե առաջիդ մեկ էնպես քաղաք ա բաց ըլլում, որ հազար-հազար կենող միջումն ունի, ու ցրտի յա շոգի ձեռից բեզարած՝ ուզում ես, որ շտապիս, գնաս. մեկ աստվածասերի դռան վեր գաս, դինջանաս, էլ ետ ճամփեդ բռնես, գնաս: Մեկ տեղից ահագին բերդի պարիսպն ա քեզ խաբում, մեկ տեղից՝ զարմանալի եկեղեցքանց զըմբեթն ու մեծությունը, մյուս տեղից՝ բարձր մինարեթքը, քոշք ու սարայի գլխընները»²⁴:

Սակայն, քաղաքը տեսնելուց հետո, երբ առաջին պատրանքը ցրվում է, այդժամ «ջանդ դող ա ընկնում, կռներդ թուլանում: Հենց իմանում ես, թե մեկ վիշապ, յա մեկ հարամի հենց էն սհաթին ա մտել ու բոլոր կենողներին յա կուլ տվել, յա սուրը քաշել, յա գերի արել, ինքն էլ փախել»²⁵:

Աբովյանի այս տողերում հարազատորեն վերարտադրվել է նրանից տասնամյակներ առաջ և հետո Անի այցելած ուղևորների և ուխտավորների սուկումնախառն հիացումը զարմանահրաշ քաղաքի և նրա սուկալի ամայության հանդեպ, այն, ինչը 1914թ. իր ուխտագնացության ժամանակ Լեոն բնորոշելու էր որպես «անհետացածների քաղաք»²⁶:

Աբովյանը «Վերքը» գրել է 1841թ., և նրա արտահայտած զգացումներին այնքան համահունչ են նույն այս շրջանում Անին տեսած եվրոպացի ուղեգրողների տպավորությունները: Այսպես, 1836թ. հունիսին Անի այցելած անգլիացի ուղեգրող Համիլտոնը գրում է. «Ներքին դռնից ներս մտնելով՝ տեսանք ամբողջ քաղաքը, որ իր պարիսպներով տարածված էր մեր շուրջը ամեն կողմ. և թեև շինությունների ավերակները մեր կարծածի պես բազմաթիվ չէին, բայց ազդու և համարյա թե ահարկու էր քրիստոնյա քաղաքի տեսքը. մի քաղաքի, որ շինված է մի ինչ-որ ինքնուրույն, այժմյան Եվրոպայում անծանոթ ձևով և որ մնացել է համարյա նույն այն վիճակում, որի մեջ թողին նրա ավերակները ութ դար առաջ»²⁷:

Հաջորդ տարի ձմռանը Անի է գալիս մեկ այլ անգլիացի ճանապարհորդ՝ Ուիլբրենհեմը, ում ևս ցնցում է ամայացած քաղաքը. «Շինությունները ամբողջ են մնա-

23 Խ. Աբովյան, Վերք Չայաստանի, էջ 190:

24 Նույն տեղում, էջ 259:

25 Նույն տեղում, էջ 260:

26 Լեո, Անի, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1985, էջ 246:

27 Նույն տեղում:

ցել, և այս հանգամանքը անհասկանալի է դարձնում այստեղի միայնությունը. սկանա կերպով աչքը թափառում է չորս կողմում, որոնելով կենդանության նշաններ: Այսպիսի գգացմունք չէ հարուցանում հին ժամանակներից մնացած ավերակների տեսքը: Բաբելոնի անկերպարան հողաբլուրները մեռելների կմախքի պես են երևում, իսկ այս ամայացած և դեռ կանգուն քաղաքը թվում է թե նմանվում է նոր անշնչացած մի դիակի, որի մեջ դեռ երևում են կենդանության նշույլները»²⁸:

Անիի ավերակների գիտական քննության համար ֆրանսիական կառավարությունը 1838թ. Անի է գործուղում ֆրանսիացի գիտնական Էռժեն Բուպեին: Վերջինս իր ստացած տպավորությունների մասին գրում է. «Մեծ բաղձանքով մտանք Անիի հյուսիսային ավագ դռնով, որ բացված էր կարծես մի տոնական օրի համար, որպեսզի ուրախ քաղաքացիների բազմությունը դուրս գա. նրա ներքին մասը մեր աչքին թափուր երևաց, ինչպես կողոպտված գերեզման... կարծես թե դեռ երեկ էր, որ հարձակվեցին քաղաքի վրա, և հաղթողը նոր է վերցրել ու տանում է կողոպուտները... քաղաքի մեջ ամեն ինչ թվում է անիծված»²⁹:

Ալիշանը թեև չի տեսել Անին, սակայն իրեն բնորոշ ձևով նկարագրել է այն, մինչ այդ գրված բազում գործերի համադրական քննությամբ: Ալիշանը այն միտքն է հայտնում, որ Անին այդպիսի տպավորություն չէր թողնի, եթե կիսականգուն լինելու փոխարեն առավել մեծ չափով ավերակ դարձած լիներ. «Անի քան զամենայն քաղաքս աւերեալս և լքեալս երևի և այս վասն կիսականգուն և կիսակենդան կալոյ»³⁰: Ալիշանի բնորոշմամբ, Անին այնքան անաղարտ է մնացել ամայանալուց յոթ-ութ դար անց, որ թվում է, թե տակավին երեկ է կառուցվել: Ալիշանը միստիկական մի խորհուրդ է տեսնում քաղաքի այս ամայության մեջ, անգամ ակնարկում՝ անեծքով եղած հնարավոր կործանման մասին. «Եթէ չիցէ այս մեզ երկնային իմն հրաշախառն խրատ, ապա մի ի մեծագոյն գաղտնեաց ժամանակի և պատմութեան համարելի է»³¹: Այսպիսով, եթե քաղաքի ամայացումը մեզ ուղղված երկնային մի հրաշախառն խրատ չէ, ապա այն պետք է համարել ժամանակի և պատմության մեծագույն գաղտնիքներից մեկը:

Ամայի քաղաքը այնպիսի ցնցող տպավորություն է թողել դարեր շարունակ, որ տարբեր ժողովուրդների մոտ ընդունված «սև ձյուն գա գլխիս» արտահայտությունը հայկական միջավայրում տեղայնացվել և կապվել է Անիի հետ: Այդ ավանդությամբ ասվում է, որ Անիի ավերման օրերին երկնքից մուգ ձյուն է սկսում գալ, որը երկնային նշան համարելով՝ Անիում ապրողները սարսափահար փախչում են՝ ասելով. «Սև ձյուն եկավ գլխիս»: Ժողովրդական մեկնաբանությամբ այնուհետև ասվում է, թե մարդիկ, հարազատի կորստյան գույժը լսելով, ասում են. «Սև ձյուն գլխիս»³²:

Աբովյանը գեղարվեստական մեծ վարպետությամբ կարողացել է ժամանակի ընդհանրացված ըմբռնմանը համահունչ ձևով պատկերել անիծված համարվող քաղաքը: Յնցող է հատկապես գիշերվա տեսարանը, քանի որ համաձայն ժողովրդական հավատալիքների, անիծված տեղերում ավերակները և լքված շինությունները գիշերները լցվում են չարքերով և տարբեր չար ոգիներով: Անիի պարագային

28 Նույն տեղում, էջ 189:

29 Նույն տեղում, էջ 190:

30 Դ. Ղևոնդ Ալիշան, Շիրակ, Ս. Ղազար, 1881, էջ 34:

31 Նույն տեղում, էջ 104:

32 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 406:

նման զգացողությունը ավելի ուժեղ է եղել, քանի որ քաղաքը նաև որպես անցյալի հավաքական մի գերեզման և ավերակ է ընկալվել, իսկ նման տեղերում գիշերները շրջում են ոգիները:

Աբովյանը գրում է, որ Հովհաննես Երզնկացու անեծքից հետո Անիի «խալխը ցրվեցին, փախան, որը Ղրիմ, որը Պոլշա³³. Էս անշունչ քարերը մնացին ցից-ցից, հազար եկեղեցուցը հինգը մնացին շեն: Տաճարք, ապարանք, գանձ, հարստություն անեծքի փայ էլավ, հողը մտավ հայոց ազգի մնացած փառքն էլ, ու մինչև էսօր էլ երկրի ձենը գալիս ա»³⁴:

Այս տողերը ևս հիմնված են հայ միջնադարյան մատենագրական ավանդույթի և դարերով ձևավորված ըմբռնումների վրա: Ղրիմի, Լեհաստանի և ընդհանրապես Արևելյան Եվրոպայի հայկական գաղթավայրերի, և անգամ՝ Հայաստանի մի շարք բնակավայրերի (Ձեյթուն, Թոմարգա, Հին Ջուղա և այլք) բնակիչների համար ասվում է, որ նրանք Անիից եկած հայերի ժառանգներն են: Այս մասին պահպանվել են մի շարք ավանդություններ, պատմություններ, անգամ ժողովրդական ստուգաբանություններ:

Այսպես, Ձեյթունի համար ասվում է, որ նրա առաջին բնակիչները եղել են Անիից գաղթած յոթ տուն հայեր, որոնք սկզբնապես հաստատվել են այն ձորում, որն անվանվում էր Անի-ձյուր³⁵: Կեսարիայի Թոմարգա գյուղաքաղաքի մոտ գտնվող Հայեկ բնակավայրի համար ասվում է, որ երբ Անիից գաղթականներ են գալիս այստեղ, տեղացիները ասում են հայեր են եկել, որից և բնակավայրի անվանումը:

Ժողովրդական ստուգաբանությամբ անգամ Ջուղան է կապվում Անիի հետ այն բացատրությամբ, թե երբ Անին սկսում է ավերվել և Ջուղան ծաղկում է ապրում, վերջինս համարվում է նրա մի մասը կամ ճյուղը, որից էլ Ջուղա՝ որպես «Անիի ճյուղ ա» անվանումը³⁶:

Մինաս Բժշկյանը Լեհաստանի հայերին նվիրված իր գիրքը սկսում է Անիի պատմությամբ՝ որպես սկիզբը լեհահայության: Գաղթաշխարհի հայության մեջ ոչ միայն սերնդեսերունդ փոխանցվում էր նրանց անեցի լինելու պատմությունը, այլև նրանք Անի ուխտի էին գնում որպես իրենց նախնիների ծննդավայր: Դեպ Անի ուխտագնացությունը տարածված էր հատկապես Նոր Նախիջևանի հայերի մեջ, որոնք գաղթել էին Ղրիմից, իսկ Ղրիմի հայերը համարվում էին անեցիներ: Այս մասին Խ. Փորթեշյանը գրում է. «Ամեն տարի ամառվա ընթացքում հայ երիտասարդությունը խոշոր խմբերով, ձիերի վրա նստած, ուխտ է գնացել Մշո Սուրբ Կարապետի վանքը, ճանապարհին այցելել է Հայաստանի տեսարժան վայրերը և անպատճառ իրենց մայրենի Անիի ավերակները: Այդ սովորությունը Ղրիմի հայերը իրենց հետ բերին և Նոր Նախիջևան»³⁷:

Անեցի լինելու այս ըմբռնման մասին Լեոն գրում է. «Անին մոռացված էր, բայց անեցին չէր մոռացվում: Պարծանք էր անեցի լինելը, որովհետև Անին մի բարձր, կուլտուրական, ըմտրյալ, ազնիվ և զարմանալի ընդունակ ժողովրդի անուն էր: Հայերի մեջ դեռ այսպիսի բարձր, ազնվական տիտղոս ոչ մի նահանգ, ոչ մի քաղաք

33 Լեհաստան:

34 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 260:

35 Ա. Ղանալանյան, Ավանդապատում, էջ 156:

36 Նույն տեղում, էջ 169:

37 Խ. Փորթեշյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., 1965, էջ 66:

չէր ստեղծել: Անեցի լինելը մեծ պարծանք էր, թեև իրապես անեցի լինելը նշանակում էր լինել հայրենիքից գուրկ, թափառական, օտար երկնքի տակ դեգերող»³⁸:

Ասվածին համահունչ են նաև Ավետիք Իսահակյանի հետևյալ խոսքերը. «Ես միշտ գգում եմ ինձ Անիի քաղաքացի»³⁹:

Իսկ ահա Աբովյանը, Աղասիի ազատած գերիներին ի մի հավաքելով Անիում, իր «Վերքում» ասես փորձում է վերակենդանացնել պատմությունը հակադարձ ընթացքով՝ աշխարհում ցրված անեցիները վերադառնում են հայրենիք, և վերհառնում է հայոց թագավորության մայրաքաղաք Անին: Ինչպես Աղասին է ասում. «Մնանք էս սուրբ հողումը. մեր սուրբ թագավորաց գերեզմանը, մեր սուրբ եկեղեցիքը ազատենք գողի, ավազակի ոտքից»⁴⁰: Գերությունից փրկվածները, սակայն, հրաժարվում են Անիում մնալ, պատճառաբանելով թե այն անիծված քաղաք է:

Բայց, այնուամենայնիվ, մի կարճ ժամանակով թվում է, թե իրականաբար է Աղասիի երազանքը, երբ 300 հայ զինված քաջեր մտնում են «իրանց որբ մայրաքաղաքը», ասես կենդանացնելով Բագրատունյաց փառքը⁴¹:

Վեպի ամենահուզիչ էջերից է Աղասու՝ Անիին հրաժեշտ տալու դրվագը, որը խորհրդանշում է նրա քաղաքական երազի անկատար մնալը: Աբովյանի այս քաղաքական երազը չի վրիպել ցարական իշխանությունների աչքից: Վեպին ցարական գրաքննության տված եզրակացության մեջ ասվում է. «Հեղինակն իր ողջ ուժերը գործ է դնում, որպեսզի գրգռի հայ ժողովրդի մոլեռանդությունն ու հիշեցնի նրանց իրենց քաղաքական ինքնուրույնության իրավունքը»⁴²:

Վեպի երկրորդ՝ «Ողբ հայրենասիրի» վերնագրին համահունչ ձևով «Վերքի» արձակ շարադրանքը քանիցս ընդմիջարկվում է Աղասու չափածո ողբախառն մտածումներով: Անիին նվիրված բաժնում կան նման երեք հատվածներ: Դրանցից առաջինը բերված է Հովհաննես Երզնկացու անեծքի պատմությունից անմիջապես հետո և յուրօրինակ բողոք ու ընդվզում է այդ անեծքով պայմանավորված մատնության դեմ: Այստեղ արդեն բանաստեղծական խտացվածությամբ է ներկայացված Անին առաջին անգամ տեսնողներին պատող այն խաբկանքը, թե իրենք կենդանի քաղաք են մտել, և այդ խաբկանքին հաջորդող սուսկումը.

«Երա՞ց եմ տեսնում, քնա՞ծ եմ, ա՞չքս ինձ խաբեց»,

Ասում ես մտքումդ, ուշագնաց ըլում:

Հո նո՞ր են սրանք, բաս սրանց միջումն

Ընչի՞ չկա ձեն, ընչի՞ են լավել՞⁴³:

38 Լեո, Անի, էջ 185:

39 Տե՛ս Ա. Իսահակյան, Ավետիք Իսահակյանի պոեմները, Եր., 2007, էջ 79: Թերևս, Վարպետի այս տողերը հարազատորեն արտացոլում էին ժամանակին իր հարազատ Ալեքսանդրապոլ-Գյումրիի քաղաքացիներին համակած Անի վերաբնակվելու տրամադրությունները: Հատկանշական է, որ 19-րդ դարի վերջերին հայ ազգային-ազատագրական շարժման վերելքի շրջանում, գրեթե ամբողջությամբ հայաբնակ այս բարեկեցիկ քաղաքի բնակիչները խնդրագիր էին ներկայացրել ցարական իշխանություններին, որպեսզի Անիում վերաբնակվելու իրավունք ստանան, սակայն վերջիններս մերժեցին նման խնդրանքը՝ այն դիտելով իբրև հայության շրջանում արթնացող անկախական տրամադրությունների արտահայտություն: Տե՛ս Տարագիր (Մ. Շաթիրյան), Անկախութեան գաղափարը Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադիրների մտայնութեան մեջ, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1932, N 11, էջ 95, տես նաև Գևորգ Խուդիճյան, ՀՀ Դաշնակցության քննական պատմություն, Եր., 2006, էջ 74:

40 Խ. Աբովյան, Վերք Հայաստանի, էջ 266:

41 Նույն տեղում, էջ 272:

42 Նույն տեղում, էջ 31:

43 Նույն տեղում, էջ 261:

Այս բանաստեղծություններից երրորդով միաժամանակ ավարտվում է Անիին նվիրված հատվածը, ուստի այն նաև քաղաքին ուղղված հրաժեշտի խոսք է, որում Աղասին ասում է, թե ինքը հոգին ուրախությամբ կավանդի, եթե «Անու միջումն իմ մարմինս թողամ»⁴⁴: Ողբի ժանրի ավանդական պատկերներն ու արտահայտչամիջոցներն Աբովյանը օգտագործում է նույն այս մոտիվի շարունակական զարգացման համար.

**Աչքեր, բռնացր, բալբի թե էլ բաց
Չտեսնիք դուք Անու լուսահողն օրհնած:**

Այսինքն՝ եթե ժողովրդական ողբերում ողբացողը ասում էր, որ իր աչքերը թող կուրանան, քանի որ իր սիրելիին, հարազատին այլևս չի տեսնելու, այստեղ արդեն նման ձևով Աղասին է ասում՝ թող իր աչքերը կուրանան, քանի որ կարող է այլևս չտեսնի Անիի «լուսահողն օրհնած»: Այս վերջին արտահայտությունը ուղղակի և հզոր հակադրություն է քաղաքի անհիծված լինելու մտայնությանը, որ Անին ոչ թե անհիծված է, այլ հակառակը, նրա հողը լուսավոր է և օրհնյալ:

Ուստի, Աբովյանը իր ժամանակի հայ կյանքի համար անսովոր, ուղղակի արտառոց թվացող այն միտքն է հայտնում, որ իր հոգին թող դժոխք գնա, միայն թե մարմինը Անիում թաղվի.

**Թ՛ո՛ղ հոգիս դժոխքը գնա՛, խորովվի.
Իմ սուրբ նախնյաց տեղ՝ իմ ազիզ Անի,
Էլի որ մարմինս մեկ քարի տակի
Ըլի, քո ծոցումն, ինձ դրախտ պետք չի՛:**

Այսինքն՝ Աբովյանը ցանկանում էր, որ Անին պատուհասած անեծքը իրեն կուլ տա, տանի, միայն թե քաղաքն ազատվի այդ անեծքից:

Քանի որ անեծքի արտահայտություններից մեկն էլ քար դառնալն էր, և ամայի քաղաքը վերածվել էր քարացած քաղաքի, Աբովյանը ասում է, թե ինքը պատրաստ է նման ձևով քարանալու, սակայն քարացած էլ դիմելու է իր հայրենակիցներին, որ քաղաքը ամայի չթողնեն: Նման կոչով էլ ավարտվում է այս չափածոյի վերջին տունը.

**Քարացած տեղիցս կանգնիմ ու ասեմ,
Ամեն անցնողին ետևից կանչեմ,
Քարացած լեզվով վայ տամ, աղաչեմ.
«Ուր եք գնում, թողում, ձեր նախնյաց տեղն եմ»:**

Վերջին այս տողը համահունչ էր 19-րդ դարի 40-60-ական թթ. ստեղծված մի շարք բանաստեղծությունների հետ, որոնք ավարտվում էին քաղաքի վերաշինության հույս-կոչով: Նման մի քանի բանաստեղծություններ գետեղված են Մ. Միանսարյանցի «Քնար հայկական» ժողովածուում: Դրանցից «Անի քաղաք նըստեր՝

44 Նույն տեղում, էջ 279: Նույն տրամադրությունները հետագայում արտացոլվել են նաև Դովի. Շիրազի հայտնի «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» տողերում:

կուլայ» սկսվածքով բանաստեղծությունում Անի քաղաքը ասում է.

**Երբեմն էի շատ անման, Հայոց քաղաք արևելեան,
Աւերակ եմ սեփահատակ, նստեր կուլամ ես միայնակ:
Եկար՝ տեսար, դարձեր՝ կերթաս, լալով կըսես. «բարեաւ մնաս»,
Աստուած սիրես, չմոռանաս, Մասիս սարին երբ մոտենաս,
Ըսես իմ քաջ Արարատին. «Նստեր կուլայ քո խեղճ Անին»,
Կըսէ, ե՞րբ աւետիք կտաս, թէ՛ իմ Անի, հերիք է լաս»⁴⁵:**

Սեկ այլ բանաստեղծի՝ Պետրոս Տեր-Հովսեփյան Մաղաթյանցի (Աբովյանի տարեկիցն էր, ծնվել է 1810 թ. և նրա նման ու գրեթե նույն տարիներին Թիֆլիսում աշակերտել է Հ. Ալամդարյանին) բանաստեղծությունում ևս Անին, դիմելով հայ երիտասարդներին, ասում է.

**Ով դու անցաւոր, հայ երիտասարդ,
Տես Անի մայրաքաղաքս հայոց.
Նախ շքեղ էի յաշխարհի, իսկ արդ՝
Եղէ առարկայ ծաղու տղայոց,
Ո՞ւր էք դուք, ո՞ւր էք դուք, ուր էք դուք, դիցազունք հայոց⁴⁶:**

Աբովյանի այս **Անիականի** յուրօրինակ արձագանքը կարելի է համարել նաև Ավետիք Իսահակյանի «Ուստա Կարոյի» առաջին տարբերակի (գրված 1910-11 թթ.) «Կայծակը և Ուստեն իրենց խմբով Անի են գնում» գլուխը: «Վերքի» գրությունից ուղիղ յոթ տասնամյակ անց հայ գրականության մեկ այլ դասական՝ պատմաքաղաքական միանգամայն այլ իրավիճակում և գրական-գեղարվեստական այլ ըմբռնումների և աշխարհայացքի տեսանկյունից, սակայն Աբովյանին միանգամայն համահունչ ձևով է պատկերում Անին, որի վրա գիշերվա պես իջել է անեծքը, սակայն էական մի տարբերությամբ. **այստեղ արդեն քաղաքն ինքն է ի, նշան բողոքի, իր քարացած ավերակներով պարզվում անեծքի նման:**

Աբովյանի վեպին ևս համահունչ է ամայի քաղաքում, գիշերային խավարում վեպի հերոսներին պատած նույն զգացումը: Իսահակյանը իրեն բնորոշ ստեղծագործական հզոր շնչով իրար է միահյուսել Անիի տարբեր դարերի ընկալումները մինչև Աբովյան ու հաջորդող տասնամյակները և դրանք վերիմաստավորել ազգային ու խոհափիլիսոփայական մի նոր հայացքով. «Լեռան թիկունքից ծուփ-ծուփ շողերով լուսնյակը եկավ և մեղմ հայացքը ձգեց Անիի փլատակների և Ուստի վրա: Պարիսպները փաթաթված, բարուրված մութ սովերներով խոժոռ նայեցին հեզ լուսնյակին: Խավարը ծածկել էր զարկված, ջարդված Անիի խոր ու դարավոր վերքերը, իսկ լուսինը բացեց նրանց բերանները, և Ուստին ավելի ահարկու էին թվում լուսնի տակ ցցված պարիսպները, քան խորհրդավոր խավարի մեջ, քանի որ բուրգերի նեղ լուսանցքները չորացած գանգի բաց աչքերի պես նայում էին նրան, և պարիսպների ցից-ցից, սրածայր քարերը՝ որպես կմախքի մատներ, վեր էին ցցվել, վեր, դեպի երկինք, ինչպես բողոքներ, նախատինք, անեծք իրենց ողբազին կործանման համար: Սերունդ սերունդի հետևից կուգա և հող կդառնա,

45 Քնար Յայկական, խմբագրեց Մ. Մ. Միանսարեանց, Ս. Պետերբուրգ, 1868, էջ 477:

46 Նույն տեղում, էջ 533:

սակայն դարերը այդ սերունդներին կմախքացած քարե մատներով ցույց կտան աշխարհին թուրքի վայրագ արարքի վրա...

Խարույկը հանգել էր արդեն, և Ուստեն սուկում էր գգում: Նրա վախեցած հոգին լսում էր մեկ-մեկ, չես իմանում որ խուլ անկյուններից, բուերի հառաչանքը, որոնք գիշերն ամբողջ վայ են տալիս իրենց գլխին, իսկ մեղմ քամին հավաքած հեռուի, անհայտ տեղերից բերում էր ձայներ, ձայնի կտորներ՝ անորոշ, անձև...»⁴⁷:

Աբովյանը իր անկատար մնացած քաղաքական երազանքին վերստին անդրադարձավ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները» ուղեգրական երկում, որը դարձավ նրա կարապի երգը, գրված իր խորհրդավոր անհետացումից ընդամենը մի քանի ամիս առաջ: Ռուսերեն գրված այս գործում Աբովյանը ներկայացնում է Երևանի գավառապետ Ն. Բլավատսկու, Մայր Աթոռի միաբան Հովհաննես Եսայ. Շահխաթունյանցի և մի քանի այլ անձանց հետ 1847թ. հոկտեմբերին դեպ Անի կատարած իրենց ութօրյա ուղևորությունը: Այս ուղեգրությունում Աղասիի նույն հուզված և ալեկոծ հոգեվիճակով մեզ արդեն ներկայանում է ինքը՝ Խաչատուր Աբովյանը:

Այստեղ թվում է, թե Աբովյանի միջոցով Աղասին է խոսում՝ մոտենալով լքված քաղաքի մուտքին, ինչպես որ Աղասիի միջոցով Աբովյանն էր տարիներ առաջ ներկայացնում իր քաղաքական ծրագրերը: Շիրակի հարթավայրում իրենց առջև բացվող Անին տեսնելու դողով համակված Աբովյանը գրում է. «Աշնանային արևն արդեն թեքվել էր գեներից և մենք ստիպված եղանք կանգ առնել բլրած և ժայռերի սահմանագծին՝ մեր նպատակը հանդիսացող Անիի հարավային նախադռներին: Անհամբերությունից սիրտս գրթգրթում էր, աչքերս ահագնորեն փնտրում էին սիրելի քաղաքը, հարթավայրն ավելի ու ավելի ընդլայնվում էր, հորիզոնը հալվում էր ջինջ, անամպ օդային օվկիանի գեղեցիկ կապույտի մեջ, և հանկարծ սիրելի ընթերցող, ներիր, լեզուս չի համարձակվում բառերով արտահայտվել և վեհ, և հուզիչ, և սրտառուչ, և ցավատանջ ու վշտագին իմ բոլոր զգացմունքներն ու տպավորությունները և հանկարծ, օ՛ հրաշք, մեզ երևաց խորհրդավոր քաղաքի վիթխարի զանգվածն իր բազմաթիվ գմբեթներով ու զմայլելի վիթխարի պարիսպներով»⁴⁸:

Նույն այս զգացողությամբ Աբովյանից ավելի քան երեք տասնամյակ անց Ալիշանը գրելու էր. «Անին սրտառուչ, որոյ անունն անգամ իբրև անմոռաց կոչ նակ ազգային սգոյ՝ ճմլեցուցանե՛ զամենայն զգայունս սիրտ հայկազնեայ, և տեսիլ պատկառանօք գրաւե՛ զամենայն կիրթ օտարագգի»⁴⁹:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ Ալիշանի 1870-ական թթ. վերջին գրված այս տողերն առաջ բերող զգացումները ծնվել են հենց 1840-ական թվականներին, երբ այդ և նախորդ տասնամյակում դեպ Անի կատարվեցին մի քանի ճանապարհորդություններ: Չարմանալի մի գուգաղիպությամբ, Աբովյանից մեկ տարի առաջ՝ 1846թ. Անի է հասնում Վենետիկի Միսիթարյան հայրերից Ներսես Սարգիսյանը, որի նշանավոր ուղեգրությունը պատմական Հայաստանի տեղագրության, վանքերի ու հուշարձանների և նրանց վիմական արձանագրությունների գիտական նկարագրության առաջին կարևոր ձեռնարկումն էր: Ալիշանը Սարգիսյանի՝ Անիից ուղարկված նամակներից ալեկոծված, ի պատասխան նրան գրում էր.

47 Ավ. Իսահակյան, Ավետիք Իսահակյանի պոեմները, էջ 80-81:
48 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, հ. 7, Եր., 1956, էջ 206:
49 Գ. Ղ. Ալիշան, Շիրակ, Ս. Ղազար, 1881, էջ 34:

«Համբուրեցե՞ր զնշխարս մեծութեան հայկեան ոգոյ... Երանի արտասուախառն աչացոյ, ով եղբայր»⁵⁰: Նույն 1846թ. գրված մեկ այլ նամակում էլ Ալիշանը հայտնում էր. «Տեսե՞ր, տեսեր ուրեմն այն քո հայաքնին աչօրդ գակնն Բագրատունեան աշխարհի զնեծն Անի. շօշափեցեր զարքայակերպ որմունսն»⁵¹:

Անհրաժեշտ է նաև նշել, որ մինչև Սարգիսյանի այս ուղևորությունը, արդեն լույս էին տեսել դարձյալ Մխիթարյան միջավայրի հետ կապվող Մինաս Բժշկյանի՝ արդեն հիշված, ինչպես նաև Մայր Աթոռի միաբաններից Սարգիս արքեպս. Ջալալյանցի ուղեգրությունները, որոնցում առանձնակի տեղ է հատկացված Անիին⁵²: Բժշկյանը գրում է. «Անի քաղաք մինչև ցայժմ կայ մնայ խաթարեալ, սակայն մնացորդք մեծահռչակ պարսպաց և հոյակապ շինուածոց, աներակք երևելի եկեղեցեաց և պալատից ցարդ երևցուցանեն զմեծութիւն քաղաքին»⁵³:

Ինչ վերաբերում է Սարգիսյանի ուղեգրությանը, այն թեև լույս է տեսել 1864թ., սակայն հարազատ արձագանքն է 1846թ. Անիում լինելու նրա զգացողության: Նա, տեսնելով իր առջև բացվող ամայի քաղաքը, այդ տպավորության ներքո գրում է. «Իսկ և յեզերս երկնից ակն արկանելով՝ նշմարին միանգամայն յարևելից եղջերաւորն Արագած սպիտակափառ գագաթամբքն և ի հարաւոյ ալևորն Մասիս ի մառախլապատ ամպոց սքողեալ երբեմն ցկէս բարձրութեանն, և երբեմն տեսիլ աշխարհի արարեալ զպատկեր դիմացն՝ զահաւորն և զպատկառելի: Յերից այտի ցանկալի տեսարանացդ Բագրատունեացն դաստակերտ կարի մօտևորութեամբն նախահրաւէր լինի որբացելոց որդուցն, առ որ ուղևորեալ և մերձ եղեալ ի պարիսպն՝ յայլմէ յայլմէ լինի ոգի հայրենասիրի: Ի բարձրութենէ պարսպացն, յահեղ հոյակապութենէ աշտարակացն և ի խնամոտ փութոյ ազատածեռն մեծանձնութեանն, որով արդ ամենայն հիմնեալ կանգնեցաւ առ հասարակ վիմօք կոփածոյիւք ողորկագունիւք, յուշ լինին նմա անդէն Աշոտեանքն և Սմբատեանքն աշխարհաշէն թագաւորք»⁵⁴:

Դժվարընկալելի և ծավալուն այս գրաբար հատվածում Ալիշանը ցանկանում է ասել, որ Անիի ճանապարհին արևելքում նշմարվում է Արագածը իր սպիտակափառ գագաթներով և հարավում ալևոր Մասիսը՝ ծածկված մառախլապատ ամպերով, և երբեմն էլ ամբողջապես երևալով որպես ահավոր, պատկառելի մի տեսարան, հիշեցնելով արարչագործության ժամանակները, և ահա այս համապատկերում երևում է Բագրատունյաց դաստակերտը, որը հրավեր է կարդում իր որբացյալ որդիներին, որ գան իրեն տեսության, սակայն երբ մոտենում ենք քաղաքի պարիսպներին, այլայլվում է հայրենասերի հոգին պարիսպների բարձրությունից, աշտարակների ահեղ հոյակապությունից և այդ ամենը հիմնելու համար տրված առատածեռն և մեծանձն հատկացումներից, շնորհիվ որոնց քաղաքը հիմնվելով կանգնեց կոփածո և ողորկագույն պարիսպներով, որոնք հիշեցնում են Աշոտյան և Սմբատյան աշխարհաշեն թագավորներին:

Ալիշանին ուղղված Սարգիսյանի նամակներից մեկում էլ ասվում է. «Տիեզերահռչակեալն Անի թափուր և ամայի յամենայն վայելչութենէ, սակաւաթիւ եկեղեցեօք և եթ և պարպօքն և արքունեօք պարծի արդ»⁵⁵: 1847թ. գրված և Անիին նվիր-

50 Գ. Ս. Ճեմճեմյան, Ներսես Սարգիսյանի ուղևորությունը դեպի Փոքր և Մեծ Հայք, Վենետիկ, 1970, էջ 79:

51 «Բագմավէպ», 1970, էջ 63:

52 Սարգիս արքեպս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, հտ. Ա, 1842:

53 Մ. Բժշկեան, Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, էջ 69:

54 Գ. Ն. Սարգիսեան, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայք, Վենետիկ, 1864, էջ 105:

55 «Բագմավէպ», 1970, էջ 40:

ված իր առաջին հոդվածում Ալիշանը Սարգիսյանի հետևողությամբ գրում է. «Աս ծովանման ատերակաց մէջ դեռ կեցած են քանի մը հոյակապ շէնքեր, որ յաւիտեանական յիշատակ են աշխարհաքարոզ քաղաքին»⁵⁶: Համանման ձևով էլ «Նըշմարք Հայկականք» գործում էլ Անիի մասին գրում է. «Թագուհի ատերակաց ատերակացեալն Հայաստանի»⁵⁷:

Անհրաժեշտ է սակայն նշել, որ գործից՝ գործ այս մռայլ անհուսությունը որոշակի լավատեսությամբ է լցվում, սկզբնապես արտահայտվելով «Շիրակում» և ապա «Այրարատում», որը պայմանավորվում էր նաև Արևելյան Հայաստանի և այդ հատորների գրությունից առաջ Անիի ու Կարսի՝ ռուսական տիրապետության ներքո անցնելով, որը Ալիշանին հույսեր է ներշնչում, թե այսպիսով ոչ միայն Անին կվերականգնվի, այլև այնտեղ կնորոգվի հայ կյանքը:

Արևելյան Հայաստանի վերաշինությամբ այնքան խանդավառ Ալիշանը եթե «Շիրակում» Անիի ավերակների նորոգության երազն էր փայփայում և շարադրում իր ծրագիրը, ապա «Այրարատում» նշում էր արդեն կատարված աշխատանքը, թե ինչպես են «զկարելիսն կարկատել զհնացեալ տաճարս և հետ դարաւոր լուծեանց և ամայութեանց զարթուցանել ի նոսին զաստուածային օրհներգութիւնս և զպաշտօնն նուիրական»⁵⁸:

Այս լավատեսությունը ու ոգևորությունը Ալիշանին ներշնչել է նաև Արովյանի «Վերքը», որին Հայոց Նահապետը քաջածանոթ էր, ուստի այս վեպից «Շիրակում» վկայակոչում էր հենց այն հատվածը, ուր 300 հայ երիտասարդներ մտնում են Անի . «Իբրև հուսկ հայրենական յիշատակ Անոյ համարեցի վիպասանեալն յԱրովեանէ, իբրու զի յամի 1820, ի 23 յուլիսի (4 օգոստոսի) դիւցազն իւր Աղասի գումարեալ ընդ իւր 300 քաջակորով համագգի երիտասարդս, ամրացաւ ի միջի ատերակաց քաղաքին, ապստամբեալ ի Պարսից»⁵⁹:

Այսպիսով, «Վերքը», որի տպագրությունը բախտ չունեցավ տեսնելու Արովյանը, նրա խորհրդավոր անհայտացումից հետո էլ հաջորդ տասնամյակներում մասնակցում էր ոչ միայն հայրենի գրականության զարգացման ընթացքին, այլև ազգային-քաղաքական մտքի ձևավորմանը, իր անկեղծ շնչով և խոր ու հորդաբուխ հայրենասիրությամբ ոգևորելով Հայաստանի ազատագրության տեսիլն ունեցող հայ մտավորականներին:

Անին՝ որպես պատմամշակութային երևույթ, ոչ միայն հայ ժողովրդի, այլև համաշխարհային քաղաքակրթության համար, Արովյանը այսպես էր բնորոշում. «Անին ստեղծագործությունն է մի ժողովրդի, որ չի եղել հռոմեացիների նման՝ նվաճող, մոնղոլների և պարսիկների նման՝ բազմաքանակ, հնդիկների, չինացիների և հույների նման՝ առատաձեռն բնությունից և հազարամյա հանգստավետ կյանքով փայփայված ու երկրի հարստությամբ ողողված, և ոչ էլ ուրիշների արյամբ և գանձերով է հարստություն ձեռք բերել. դա ստեղծագործությունն է իր սեփական ջանքով ու աշխատանքով փառքի ու մեծության այդ աստիճանին հասած, խաղաղ, գործունյա, բայց դաժան բախտի բերումով մեծ ու անթիվ բոլոր նվաճողների խաչուղիների վրա ընկած մի ժողովրդի»⁶⁰:

56 «Բազմավեպ», 1847, էջ 7:
57 Զ. Ղ. Ալիշան, Նշմարք Հայկականք, էջ 33:
58 Զ. Ղ. Ալիշան, Այրարատ, Ս. Ղազար, 1890, էջ 111:
59 Ղ. Ալիշան, Շիրակ, էջ 104:
60 Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, ութ հատորով, հտ. 7-րդ, Եր., 1956, էջ 208:

Այս խոսքերը զարմանալի մի ընդհանրություն են գծում անգլիացի գիտնական և ճանապարհորդ Լինչի՝ ճիշտ կես դար անց Անիին տված հետևյալ բնորոշման հետ. «Անիի հիշատակարանները մեծ լույս մը կսփռեն հայ ժողովրդի նկարագրին վրա և հայկական պատմության կարևոր պարագաները կը շեշտեն: Անոնք ոչ մեկ կասկած կը թողուն, թե հայ ազգը կրնա մտնել շարքին մեջ այն փոքրաթիվ ժողովուրդներուն, որոնք ինքզինքնին կարող ցույց կուտան բարձրագույն մշակույթի տիրանալու: Անոնք կապացուցանեն թե հայերը կարող և համակրելի միջնորդներ են հռոմեական կայսրության քաղաքակրթության և Արևելքի ազգերուն միջև»⁶¹:

Վերադառնալով Աբովյանին, ասենք, որ «Վերքում» եթե Անիին նվիրված հատվածներն ունեն քաղաքական շեշտված ենթատեքստ՝ խորհրդանշելով Հայոց պետականության վերականգնման երազանքը, ապա այս ուղեգրությունում ևս թեև որոշակիորեն արտահայտվում է նույն ձգտումը, սակայն պայմանավորված Աբովյանի քաղաքական իդեոլոգիայի անկատար մնալով, և ըստ այդմ՝ քաղաքական հասցեների կրած փոփոխությամբ, Անիին արդեն, գլխավորաբար դառնում է հայոց մշակույթի անցյալ փառքի խոստում վկան, որով նա հպարտություն պետք է ներշնչեր հայությանը՝ իր ստեղծած հոգևոր մշակութային արժեքների հանդեպ:

Ինչպես գրում է այս ուղեգրության մասին աբովյանագետ Պիոն Հակոբյանը. «Աբովյանի կարապի երգը դարձավ «Ուղևորություն դեպի Անիի ավերակները (ճամփորդական խորհրդածություններ)», որը չհասցրեց հրատարակել, խիստ կարևոր մի երկ հեղինակի վերջին ամիսների հոգեվիճակն ու մտորումները հասկանալու համար: Պատումի նյութը Աբովյանի և ուրիշների իրական ճանապարհորդությունն է Երևանից դեպի պատմական քաղաքի ավերակները, բայց ըստ էության, ինչպես Աբովյանի ուրիշ շատ ստեղծագործությունների մեջ, այստեղ ևս Անին հանդես է գալիս որպես խորհրդանիշ հայ ստեղծագործ հանճարի ու հայկական պետականության, դառնալով նաև հեղինակի քաղաքական համոզումների ու լուսավորական ծրագրերի վերարժարման համար յուրօրինակ ազդակ»⁶²:

Չարմանալի մի խորհրդով՝ Արևելյան ու Արևմտյան Հայաստանների միջնասահմանին դեպ վեր և դեպ հավիտենություն են խոյանում Հայոց լեռնաշխարհի և հայ ստեղծագործ ոգու երկու ոգեղենացած փառքերը՝ Արարատը և Անին, որոնք հայ միջնադարյան ավանդույթի ազգային նորովի իմաստավորմամբ իրար միահյուսվեցին Հնի ու Նորի սահմանագծին կանգնած Խաչատուր Աբովյանի ստեղծագործություններում, և հայ ժողովուրդը անշիրիմ մնացած իր նոր Լուսավորչին անհաս փառքի ճանապարհով տարավ դեպի կյանք Մասիս:

61 Գ. Լինչ, Գայաստան, հտ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 364:

62 Խ. Աբովյան, Երկեր, Եր., 1984, էջ XXV:

Summary

ARARAT AND ANI IN THE IDEOLOGICAL SPHERES OF ABOVYAN

Vardan G. Devrikyan

In 1829 the ascent to summit of Mount Ararat with Professor Parrot had a radical impact upon the national-public and literary thinking of Khachatur Abovyan, because since the medieval times there had been a traditional prohibition of the ascent to summit of Mount Ararat upon which rested Noah's Ark.

Similarly, since the Middle Ages Ani had been considered to be destroyed because of the curse and there was a superstition that it was impossible to live in Ani. Contrary to such a mood Abovyan in "The Wounds of Armenia" settled his principal hero Aghasi together with his friends in Ani putting forward the restoration plan of Ani as the Armenian statehood.

The article deals with the national-political and spiritual-cultural role attributed by Abovyan to Ani. This plan of Abovyan is considered parallel to the works and expressed ideas in the Armenian literature and public thought in his time and during next decades.